ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼԻԼԻԹ ՀԱՅԿԻ

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր , պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Պարգևի Մկրտումյան**
	հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գայանե Սիմոնի Հարությունյան**
Առաջատար կազմակերպություն՝	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. դեկտեմբերի 12-ին, ժամը 12^{00} – ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թիվ 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. նոյեմբերի 9-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
Գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Անձի զարգացման փուլերի հոլովույթում դեռահասության տարիքային շրջափուլը բնորոշվում է հակասականությամբ, կոնֆլիկտներով ու վարքային նորագոյացություններով: Այսօր լուրջ և ահագնացող վտանգ են ներկայացնում՝ դեռահասության տարիքային շրջափուլում դրսևորվող հոգեախտաբանական համախտանիշները, սեռադերային վարքի շեղումները, որոնք նույնիսկ դիտարկվում են հարաբերական նորմայի շրջանակներում: Ու, թեպետ դեռահասության տարիքային շրջափուլի վերաբերյալ առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, այնուամենայնիվ դեռևս շատ ու շատ հարցեր կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման՝ կապված հասարակական կյանքի արագընթաց տեմպի, հանրության ինտեգրացիոն ու գլոբալիզացիոն տարաբնույթ գործընթացների, տարատեսակ նորագոյացությունների հանրային կյանք փոխներթափանցումների հետ, որոնց արդյունքում, անձի զարգացման մի շարք կողմերի հետ զուգընթաց նաև փոփոխությունների, աղճատումների ու հաճախ նաև աղավաղումների է ենթարկվում անձի սեռադերային նույնականացման գործընթացն ու արդյունքը: Եվ, եթե դեռահասության տարիքային շրջափուլին բնորոշ դժվարություններին հավելվում է նաև արտաքին գործոնների նմանատիպ ազդեցությունները՝ ապա պատկերն առավել ակնառու է դառնում: Հարկ է նշել նաև, որ բավականաչափ թույլ է ուսումնասիրված դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հոգեբանական կողմը, դրանց դրսևորման յուրահատկություններն ու բացասական ներուժի մարման ուղիները:

Նման իրավիճակում հետազոտության առաջնահերթ խնդիրներից է վերլուծել, իմաստավորել ու գնահատել առաջադրված խնդրի հոգեբանական առանձնահատկությունները, վեր հանել դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հատկանիշները՝ դիտարկելով դրանց դրսևորումները սոցիալական միջավայրին դեռահասի հարմարման համատեքստում, ինչի շնորհիվ հնարավոր կլինի մշակելու սեռադերային դեստրուկտիվ հատկանիշներով դեռահասի նույնականացման հոգեախտաբանական և հոգեշտկման մեխանիզմներ:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել և վերհանել դեռահասի սեռադերային նույնականացման դեստրուկցիայի էությունը, դրսևորման առանձնահատկությունները, զարգացման փուլայնությունը՝ երևույթը դիտարկելով հոգեբանական հարմարման համատեքստում:

Հետազոտության նպատակի իրականացման համար անդրադարձել ենք հետևյալ կոնկրետ **խնդիրներին՝**

1.Տեսամեթոդաբանական վերլուծության ենթարկել հիմնախնդրի էությունը և դրսևորման առանձնահատկությունները:

2.Վերհանել դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի և հոգեբանական հարմարման փոխկապակցվածությունը:

3.Ներկայացնել սեռադերային նույնականացման դեստրուկցիայով պայմանավորված հավակնությունների և ինքնագնահատականի դրսևորումները:

4.Վերհանել դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի տարիքային փուլայնությունը:

5.Վերհանել սեռադերային նույնականացման դեստրուկցիայով պայմանավորված դեռահասի անձի եսակենտրոնության/սոցիոկենտրոնության յուրատիպ առանձնահատկությունները:

6.Մշակել մեթոդական հանձնարարականներ դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի կանխարգելման ուղղությամբ:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորման առանձնահատկություններից են սեռին ոչ համարժեք դերային կարծրատիպերի դրսևորումները, հակառակ սեռին նույնացման միտումները, սեփական Ես-ի ընդունման աղճատումներն ու սոցիալական միջավայրում ադապտացիայի անբավարար մակարդակը:

Հետազոտության օբյեկտն է՝ դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիան:

Հետազոտության առարկան է՝ դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորումները հարմարման համատեքստում:

Մեթոդաբանական և տեսական հիմքերը: Հետազոտության տեսամեթոդական հիմք են հանդիսացել Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել դեռահասության տարիքի, առանձնահատկությունների, սոցիալական դերի, դերադիրքային դրսևորումների, հարմարման մեխանիզմների, հոգեսեռական զարգացման և սեռադերային նույնականացման գործընթացի վերաբերյալ Դ. Էլկոնինի, Ա. Նալչաջյանի, Գ. Կրայգի և Դ. Բոկումի, Ի. Ս. Կոնի, Դ. Ն. Իսաևի, Վ. Ե. Կագանի, Ա. Ա. Ռեանի, Է. Էրիքսոնի, Լ. Ի. Բոժովիչի, Ս. Բեմի, Ի. Ս. Ռոզումի, Ե.Պ. Իլյինի, Շ. Բերնի, Ս. Խուդոյանի աշխատություններն ու հայեցակարգային մոտեցումները:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝

Ս. Կաշտանովայի, Ա. Նիկոլաևայի «Նկարիր տղա և աղջիկ» պրոյեկտիվ մեթոդիկան, Ֆ. Գուդինաֆի «Ինքնանկար» մեթոդիկայի հեղինակային մոդիֆիկացիան, Ս. Բեմի սեռադերային նույնականացման ախտորոշման հարցարանը, Մ. Կունի և Տ. Մաքպարտլենդի «Ով եմ ես» հարցարանը, Յու. Ռեշետնյակի և Գ. Վասիլչենկոյի մշակմամբ Տ. Լիրիի հարցարանը, Մ. Սաբունաևայի «Դասի գենդերային փորձաքննություն» փորձագիտական գնահատման մեթոդիկան, դիտման մեթոդը, ոչ ստանդարտացված զրույցի մեթոդը, Դեմբո-Ռուբինշտեյնի «Ինքնագնահատականի ախտորոշման» մեթոդիկան, Կ. Ռոջերս և Ռ. Դայմոնդի «Սոցիալական-հոգեբանական հարմարման ախտորոշման» մեթոդիկան, Ռ. Էնրայտի «Դեռահասի եսակենտրոնության-սոցիոկենտրոնության ախտորոշման (AES)» մեթոդիկան՝ Տ.

Ռյաբովայի մշակմամբ, Է. Շաֆերի «Ծնողների հանդեպ դեռահասների վերաբերմունքի բացահայտման» հարցարանը:

Աշխատանքի գիտական նորույթը: Բացահայտվել, մեկնաբանվել և լրամշակվել են դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորման բնութագրական չափանիշները, սեռադերային նույնականացման դեստրուկցիայի փուլայնությունը և դրանց հիմքում առաջացող սոցիալական հարմարման առանձնահատկությունները:

Տեսական նշանակությունը: Կատարած վերլուծությունները և դրանց ամփոփումները, բացահայտված առանձնահատկություններն ու օրինաչափությունները հարստացնում և ամբողջականացնում են դեռահասների սեռադերային նույնականացման, ինչպես նաև նույնականացման դեստրուկցիայի վերաբերյալ տեսական պատկերացումները՝ մեծացնելով սեռադերային առանձնահատկությունների և սեռային ինքնագիտակցության ձևավորման նշանակությունը տարատեսակ դևիացաների հաղթահարման գործընթացում:

Կիրառական նշանակությունը: Դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հետազոտության ընթացքում ստացված արդյունքները և բացահայտված հոգեբանական առանձնահատկությունները կարող են օգտագործվել հոգեբանության, մանկավարժության ոլորտում հետագա ուսումնասիրությունների կատարելագործման համար, մշակված մեթոդական հանձնարարականները կիրառելի են դեռահասների սեռային ինքնագիտակցության ձևավորման, սեռադերային նույնականացման գործընթացի կազմակերպման, ինչպես նաև ի հայտ եկող սեռադերային նույնականացման դեստրուկցիայի շտկման և կանխարգելման, նաև հարմարման խանգարումների, տարաբնույթ ներանձնային ու միջանձնային դեզադապտացիայի բացահայտման, մեղմացման և հաղթահարման նպատակով:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Դեռահասության տարիքային փուլի զարգացմանը զուգընթաց տղա և աղջիկ դեռահասների մոտ որոշակի փոփոխության են ենթարկվում սեռադերային նույնականացման անդրոգինության հատկանիշները՝ տղաների մոտ դրսևորվելով տղամարդու վերաբերյալ կարծրատիպային պատկերացումների ամրապնդմամբ, իսկ աղջիկների մոտ, ընդհակառակը՝ անդրոգինության մասին պատկերացումների խորացմամբ, որոնք իրենց արտահայտությունն են գտնում տղաների և աղջիկների հազուստի ունիֆիկացման և վերբալ մակարդակում նույնական արտահայտչամիջոցներով:
2. Վաղ դեռահասության փուլում նկատվում է սեռադերային չտարբերակված հատկանիշների գերակայություն, որը վեր է ածվում ուշ դեռահասության փուլում տղաների մոտ՝ մասկուլինության, իսկ աղջիկների մոտ՝ անդրոգինության որոշակի միտվածության:
3. Սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հատկանիշներով դեռահասների մոտ առավել, քան ստուգիչ խմբում, վտանգված են թե՛ հավակնությունների և թե՛ ինքնագնահատականի մակարդակները: Սեռադերային

նույնականացման դեստրուկցիան հանգեցնում է՝ անհամարժեք բարձր կամ ցածր հավակնությունների պարագայում, դեռահասների ինքնագնահատականի մակարդակի նվազմանը:

4. Սոցիալական հարմարման գրեթե բոլոր ցուցանիշները սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հատկանիշներով դեռահասների մոտ դրսևորվում են նորմայից ցածր մակարդակում թե՛ տղաների, թե՛ աղջիկների մոտ:

5. Սեռադերային նույնականացման դեստրուկտիվ հատկանիշներով դեռահասների խմբում առավել նշանակալի են ծնողավարման թշնամական, դիրեկտիվ և անհետևողական եղանակները, որոնք կորցնում են իրենց արտահայտվածությունը ստուգիչ խմբի դեռահասների գնահատականներում:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են խնդրի հիմնախնդրին առնչվող աղբյուրների վերլուծությամբ, որոնք կազմել են հետազոտության տեսամեթոդական հիմքը, աշխատանքի նպատակին համապատասխան խնդիրների և մեթոդաբանության մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդների համակազմի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնում: Ստացված արդյունքներն ու նախականխման մեթոդները կիրառվել են «Առողջության և կրթության հայկական կենտրոնի» հոգեբանական ծառայության բաժնում ընդգրկված իրավախախտումներ կատարած դեռահասների հետ իրականացված աշխատանքներում: Տեսական մոտեցումներն ու հետազոտության մեթոդական հանձնարարականներն օգտագործվել են նաև Երևան քաղաքի թիվ 106, 164, 134, 410 դպրոցների դեռահասների հետ իրականացված հոգեբանական թրեյնինգային աշխատանքներում: Հետազոտության արդյունքներն ու մեթոդական հանձնարարականները կիրառվել են թիվ 3, թիվ 1 Հերացի հիվանդանոցային համալիրի պոլիկլինիկայում ծնողավարման, ինչպես նաև դեռահասների հետ հեգեբանական թրեյնինգային աշխատանքներում, Աբովյանի բժշկական կենտրոնի ՓԲԸ-ում կազմակերպված դեռահասների, ծնողավարման թրեյնինգների հանդիպման շրջանակներում: Հիմնախնդրի տեսական և հետազոտական մոտեցումները տպագրվել և ներկայացվել են «Հասարակություն, ընտանիք, դեռահաս արդիական խնդիրները Հայաստանում և սփյուռքում միջազգային գիտագործնական համաժողովում՝ շեղվող վարքագիծ ունեցող դեռահասների սեռահասունացման և սեռային դերի ընկալման ու դրսևորման յուրահատկությունները» թեմայով (Երևան 2012): Մեթոդական Հետազոտության տեսական դրույթները ներկայացվել և տպագրվել են նաև «Տեսական և կիրառական հոգեբանության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովում՝ «Ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները իրավախախտ դեռահասների մոտ» (Երևան 2011), ինչպես նաև «Տեսական և կիրառական

հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովում՝ «Ծնողավարման թրեյնինգների կազմակերպման արդյունավետությունը դեռահասների սոցիալ հոգեբանական հարմարվողականության գործընթացում» (Երևան 2013):

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է տեսական և փորձարարական մասերից՝ ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի առաջին և երկրորդ գլուխները ներառում են տեսական վերլուծություններ, դեռահասության տարիքային առանձնահատկությունների, հոգեֆիզիոլոգիական զարգացման ու հասունացման օրինաչափությունների, դերադիրքային վարքի, սոցիալական, մասնավորապես, սեռադերային սոցիալականացման ու սեռադերային նույնականացման հնարավոր աղճատման ու հոգեբանական հարմարման խնդիրների վերլուծությանը, վերհանմանն ու մեկնաբանմանը՝ վերջիններս դիտարկելով դեռահասի սեռադերային նույնականացման լույսի ներքո: Ներկայացված են 14 աղյուսակ և 11 գծապատկեր: Ատենախոսությունը շարադրված է 168 տպագիր էջերի վրա, առանց հավելվածի՝ 142 էջ: Օգտագործվել է 154 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվված է թեմայի արդիականությունը, ներկայացված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ձևակերպված են հետազոտության խնդիրները և տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **«Դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունները հոգեբանական հարմարման համատեքստում»** խորագրով առաջին գլխում ներկայացվել է դեռահասության տարիքի բնութագրումը հարմարման համատեքստում: Առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից՝

1.1 Դեռահասության փուլի հոգեբանական բնութագրումը

1.2. Դեռահասների հոգեբանական հարմարման առանձնահատկությունները:

Առաջին ենթագլխում ներկայացվել են դեռահասության տարիքային շրջափուլի հոգեբանա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները ինչի արդյունքում կարող ենք փաստել, որ դեռահասության տարիքային շրջափուլի այս կամ այն հիմնախնդիրներն ամփոփվում մեն դեռահասության տարիքի բնութագրի ներքո, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ դեռահասի պուբերտատ զարգացումը, իմացական զարգացումը, դեռահասի հարմարման գործընթացները և ինքնության յուրատիպ դրսևորումները: Ենթագլխում ներկայացված բոլոր տեսական մոտեցումներում էլ շեշտադրվում է դեռահասության փուլում սեռադերային նույնականացման առանցքային նշանակությունը

Երկրորդ ենթագլխում քննվել են դեռահասների հոգեբանական հարմարման առանձնահատկությունները՝ որպես դեռահասության տարիքում սոցիալական նորմերի յուրացման, սոցիալական միջավայրին դեռահասի հարմարման հիմնախնդիրներ: Ենթագլխում ներկայացված տեսական մոտեցումներում քննարկված են մեծահասակների՝ որպես դեռահասի արտաքին սոցիալական միջավայրի, ազդեցության կարևորությունը դեռահասների հարմարման գործընթացում, դեռահասության տարիքին բնորոշ հոգեբանական հիմնական դժվարությունները, խոչընդոտները և վարքային հակազդման ձևերը: Շեշտադրվում են Ա. Նալչաջյանի, Ի. Կոնի, Հ. Ռեմշմիդտի, Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի տեսա-մեթոդաբանական մոտեցումները անձի սոցիալական հարմարման ուսումնասիրության հարցում: Ընդգծվում է այն փաստը, որ սեռադերային դեստրուկցիայի առկայության պայմաններում դեռահասների հոգեբանական հարմարման գործընթացը կրում է որոշակի դժվարություններ, որոնք ներկայացված են փորձարարական հետազոտության մեջ:

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է **«Դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման հիմնախնդիրը»** վերտառությունը և հետևյալ ենթագլուխները՝

2.1. Սեռադերային նույնականացման ձևավորման առանձնահատկությունները

2.2. Սեռադերային նույնականացման դեստրուկցիայի բնութագրումը հարմարման համատեքստում:

Առաջին ենթագլխում ներկայացվել են դեռահասության փուլի կարևոր և հիմնարար փոփոխություններից մեկի՝ սեռահասունաց գործընթացով պայմանավորված հոգեբանական փոփոխությունները, քանի որ սկսում են ձևավորվել ու զարգանալ սեռային ինքնագիտակցությունը, սեռի ընկալման, սեռային դերերի, կարծրատիպերի և միջսեռային փոխհարաբերությունների, սեռային ինքնահաստատման գործընթացները:

Շեշտադրվում է, որ անկախ անձի տարիքային զարգացման պարբերականացման ներկայիս կարծիքների բազմազանությանը՝ ոլորտի մասնագետները համակարծիք են այն գաղափարական հենքի հետ, որ դեռահասությունը բնութագրող հատկանիշները որոշվում են ոչ միայն երեխայի տարիքային դրսևորումներով, այլև ունեն արտահայտված հոգեբանական դրսևորումներ, որոնք հաճախ դառնում են առանցքային դեռահասության տարիքի բնութագրման համար:

Երկրորդ ենթագլխում դեռահասության տարիքը ուսումնասիրվել է որպես սեռային ինքնագիտակցության ձևավորման, սեռային դերերի յուրացման և սեռադերային նույնականացման ավարտի փուլ, որի արդյունքում տեղի է ունենում սեռային նույնություն և հստակեցվում է ապագա կնոջ կամ տղամարդու կերպարը: Կարևորվում է դեռահասի հոգեսեքսուալ սոցիալիզացիայի համատեքստում ընտանիքի և հասակակիցների դերը: Ընդգծվում է, որ հասարակական պահանջների ոչ բավարար պայմանները կարող են առաջացնել սեռադերային

վարքի և կարծրատիպերի փոխակերպումներ և խաթարումներ: Սեռադերային սոցիալիզացիայի հոգեբանական, հատկապես սեռադերային նույնականացման մեխանիզմների խանգարման պայմաններում, ի հայտ են գալիս արդեն իսկ սեռադերային դեստրուկտիվ վարք, փոխակերպված դերեր և կարծրատիպեր: Սեռային նույնականության խանգարումը հակառակ սեռի հետ ուժեղ և կայուն նույնականացման ձգտումն է, որն ուղեկցվում է սեփական սեռի նկատմամբ անհարմարվողականության զգացողությամբ: Դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման դեստրուկցիայի վերաբերյալ ուսումնասիրությունների վերլուծության, ինչպես նաև մեր կողմից կատարված դիտարկումների արդյունքում ներկայացվում է սեռադերային նույնականացման դեստրուկցիայի բնութագրումը հետևյալ բաղադրիչների միջոցով՝ սոցիոկենտրոնության/եսակենտրոնության ծայրահեղ դրսևորումներ, գենդերային չեզոքություն, սեփական սեռի մերժում, հակառակ սեռի հետ նույնացում, անհամարժեք բարձր կամ ցածր հավակնությունների պարագայում ինքնագնահատականի մակարդակի նվազում: Սեռադերային նույնականացման խանգարումները կամ դեստրուկցիաները հոգեբանական հարմարման խնդիրներ են առաջացնում, քանի որ դերի և սեռի մերժումը հանգեցնում է ներքին և արտաքին կոնֆլիկտների, ի հայտ են գալիս ինքնաընդունման, սոցիալական հարմարման դժվարություններ:

Այս վերլուծություններով էլ պայմանավորված է մեր հետազոտության փորձարարական մասի իրականացումը, ինչն ատենախոսության մեջ արտահայտված է երրորդ գլխում և կրում է **«Փորձարարական հետազոտության կազմակերպումն ու արդյունքները»** վերտառությունը և հետևյալ ենթագլուխները՝

3.1. Փորձարարական հետազոտության կազմակերպումը և մեթոդները

3.2. Փորձարարական հետազոտության արդյունքները

3.3 Դեռահասների սեռադերային նույնականացման գործընթացին ուղղված թրեյնինգային ծրագիր

Փորձարարական հետազոտությունը կազմակերպվել և իրականացվել է առաջ քաշված վարկածի ապացուցման և փորձարարական ճանապարհով հիմնախնդրի ուսումնասիրման նպատակով:

Հետազոտությունն իրականացվել է ՀՕՖ-ի, Օրրան–ի, UOU մանկական գյուղերի, Երևանի, Գյումրու, Վանաձորի համայնքային այլընտրանքային վերականգնողական կենտրոններում, Առողջության և կրթության հայկական կենտրոնի «Ապագա» հոգեբանական ծառայության բաժնում, «Փսիլայֆ» հոգեբանական աջակցման կենտրոնում, Երևանի թիվ 164, 134, 135, 4, 49, Աբովյան քաղաքի թիվ 10 դպրոցներում:

Հետազոտության ընտրանքը կազմել են դեռահասներ (n=826)՝ 413 տղա և 413 աղջիկ, նրանց ընտանիքի անդամներ (n=195), ուսուցիչներ (n=120) և հոգեբան-մանկավարժներ (n=15):

Դեռահասների ընտրանքը բաժանվել է ըստ տարիքային զարգացման փուլայնության՝ կազմելով երկու տարիքային խումբ՝ վաղ դեռահասության 12-14

(տղաներ՝ n=207, աղջիկներ՝ n=206) և ուշ դեռահասության 15-17 (տղաներ՝ n=206, աղջիկներ՝ n=207) տարեկան դեռահասների խմբերը:

Փորձարարական հետազոտությունը կատարվել է հետևյալ փուլերով:

1 փուլ. իրականացվել են սեռադերային նույնականացման դրսևորումների բացահայտմանն ուղղված մեթոդիկաներ և մեթոդական մշակումներ տարիքային երկու խմբերում:

2 փուլ. հետազոտության արդյունքները մշակվել և առանձնացվել են՝ սեռադերային նույնականացման դեստրուկտիվ (հիմնական խումբ) և նորմատիվ (ստուգիչ խումբ) դրսևորումներով հետազոտական խմբեր: Նշված խմբերը իրենց հերթին բաժանվել են ըստ տարիքային ենթախմբերի՝

- հիմնական I (վաղ դեռահասություն)
- հիմնական II (ուշ դեռահասություն)
- ստուգիչ I (վաղ դեռահասություն)
- ստուգիչ II (ուշ դեռահասություն):

3 փուլ. դեռահասների սեռադերային նույնականացման հարմարման համատեքստը վեր հանելու և բնութագրելու նպատակով հետազոտվել են դեռահասների, ծնողների, ուսուցիչների և հոգեբան-մանկավարժների խմբերը, իսկ արդյունքները համադրվել են մնացած փորձարարական եղանակով ստացված տվյալների հետ:

4 փուլ. իրականացվել է հավաքագրված տվյալների որակական և համեմատական վերլուծություն:

Ստորև նկարագրվում են փորձարարական հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները:

Ս. Կաշտանովայի, Ա. Նիկոլանի «Նկարիր տղա և աղջիկ» պրոյեկտիվ մեթոդիկան և **Ֆ. Գուդինաֆի «Ինքնանկար»** պրոյեկտիվ մեթոդիկայի հեղինակային մշակումն իրականացվել է վերլուծելու համար դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման առանձնահատկությունները և որոշակի սեռային դերով պայմանավորված սեփական անձի ինքնաներկայացումը: Հետաքրքիր տվյալներ են ստացվել սեռադերային իրավիճակային նույնականացման ցուցանիշներով՝ չնայած, որ նկատվում է իրավիճակային նույնականացման ընդհանուր աճի միտում սեռատարիքային բոլոր խմբերում, այնուամենայնիվ աչքի են ընկնում աղջիկ դեռահասների շրջանում գրանցված բարձր ցուցանիշները՝ տղաների համեմատ: Դա խոսում է նրա մասին, որ աղջիկ դեռահասների մոտ առաջնային են համարվում սեռադերային նույնականացման արտաքին, միջավայրային արտահայտչամիջոցները՝ մարդը գնահատվում է ոչ միայն որոշակի սեռին համապատասխան հագուստով ու սանրվածքով, այլև գործունեության բնագավառով: Իրավիճակային նույնականացման նման բարձր ցուցանիշները խոսուն փաստ են սեռադերային նույնականացման կարծրատիպային դրսևորումների վերաբերյալ, որոնք հատկապես բնորոշ են աղջիկ դեռահասներին:

Ս.Բեմի մեթոդիկայի ներառումը փորձարարական հետազոտության գործիքակազմում նպատակ ուներ վեր հանելու դեռահասների շրջանում տղամարդկային / կանացի կարծրատիպերը: Մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված ցուցանիշները ցույց ոն տալիս, որ դեռահասության տարիքում տեղի են ունենում սեռադերային նույնականացման բավական բարդ գործընթացներ, մասնավորապես, վաղ դեռահասության փուլում նկատվում է տղաների շրջանում գերազանցապես սեռադերային չտարբերակված հատկանիշների գերակայություն, ինչն արտահայտվում է թե մասկուլինության (0.17) և, թե ֆեմինության (0.12) ցածր ցուցանիշներով: Ուշ դեռահասության փուլում տղաների մոտ դիտվում է մասկուլինության որոշակի միտվածություն, ինչն արտահայտվում է մասկուլինության (-0.14) հատկանիշի համեմատաբար ավելի վառ արտահայտվածությամբ և ֆեմինության (0.13) հատկանիշի պահպանմամբ, գրեթե նույն մակարդակում:

Աղջիկ դեռահասների մոտ պատկերը մի փոքր այլ է՝ վաղ դեռահասության փուլում գրանցվել են ֆեմինության արտահայտված ցուցանիշներ (0.52), իսկ մասկուլինությունը փոքր ինչ զիջում է տղաների ցուցանիշին՝ արտահայտվելով 0.19 միջինացված միավորով: Ուշ դեռահասության փուլում աղջիկների սեռադերային նույնականացման դինամիկան կրում է զգալի փոփոխություններ և արտահայտվում անդրոգինության որոշակի պատկերով՝ մասկուլինության ցուցանիշն ուժեղանում է մինչև -0.12՝ գրեթե հավասարվելով տղաների ցուցանիշին, իսկ ֆեմինության ցուցանիշը՝ մինչև 0.65 միավորները: Ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակից դեռահասների պատասխանների դինամիկան դեռահասության զարգացմանը զուգահեռ ցույց է տալիս -1 - +1 միավորների միջակայքում պատասխանների որոշակի աճի միտումը, ինչը վկայում է անդրոգինության դրսևորման մասին: Այդ դրսևորումներից դեստրուկտիվ շեղումներով պատասխանները հիմք են հանդիսացել հիմնական խմբի առանձնացման համար:

Մ. Կունի և Տ. Մաքպարտլենդի «Ով եմ ես» հարցարանի ներառումը փորձարարական հետազոտության գործիքակազմում միտված էր դեռահասի կողմից սեփական «ես»-ի նույնականացմանը և նրանում սեռադերային բաղադրիչի դուրսբերմանը: Ստացված արդյունքները մշակվում են կոնտենտ-վերլուծության միջոցով: Հեղինակներն առանձնացնում են արդյունքների մշակման հետևյալ չափանիշները՝

- ✓ սոցիալական խմբեր՝ սեռ, տարիք, ազգություն, կրոնական պատկանելիություն, սոցիալական դերեր
- ✓ գաղափարախոսություն՝ փիլիսոփայական, բարոյական, էթիկական, կրոնական բնույթի դատողություններ
- ✓ անձի հետաքրքրությունները
- ✓ անձի նպատակներն ու ձգտումները
- ✓ ինքնագնահատականը

- ✓ կանացիության բնութագրականներ, ինչպիսիք են «նուրբ, երազկոտ, զգայուն» և այլն
- ✓ առնականության բնութագրականներ, ինչպիսիք են «ուժեղ, քաջ, նպատակասլաց, ինքնուրույն, անկախ» և այլն
- ✓ սեռադերային առումով չեզոք բնութագրականներ, ինչպիսիք են «բարի, ճշտապահ, աշխատասեր» և այլն:

Արդյունքների մշակման ընթացքում կարևորություն է տրվում ինքնանկարագրման միջոցների հագեցվածության աստիճանին նույնպես: Սեռադերային նույնականացման վերաբերյալ ստացված արդյունքները մշակվում են լրացվում են համապատասխան աղյուսակում ըստ հետևյալ չափանիշների՝

- սոցիալական դերեր
- կանացիության բնութագրականներ
- առնականության բնութագրականներ
- չեզոք բնութագրականներ:

Ներկայացված չափանիշների վերլուծությունը համալրվում է վերը ներկայացված մնացած այլ չափանիշների արդյունքներով, ըստ դեռահասի գաղափարախոսության, հետաքրքրությունների, նպատակների և ձգտումների, ինչպես նաև ինքնագնահատականի բնութագրումների:

Անձնային տարբեր հատկությունների, այդ թվում «ես»-կառուցվածքում տղամարդկային / կանացի բնութագրականների բացահայտմանն էր ուղղված **Յու. Ռեշետնյակի և Գ. Վասիլչենկոյի մշակմամբ Տ. Լիրիի հարցարանի** կիրառումը:



Նկար 1. «Ես»-կառուցվածքում անձի մասկուլինության և ֆեմինության դրսևորման միջինացված տվյալներ

Դեռահասների շրջանում գենդերային կարծրատիպերի դրսևորումների բացահայտման նպատակով կիրառվել է նաև **Մ. Սաբունանայի «Դասի գենդերային փորձաքննություն»** փորձագիտական գնահատման մեթոդիկան:

Դիտման մեթոդի շնորհիվ ուսումնասիրվել են դեռահասների սեռադերային նույնականացման հետևյալ հատկանիշները՝

•հակառակ սեռին բնորոշ հագուստի տարրերի կրումը

•հակառակ սեռին բնորոշ սանրվածքը

•հակառակ սեռին բնորոշ վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման առկայությունը:

Փորձարարական հետազոտության երկրորդ փուլով կիրառվել է մեթոդիկաների հաջորդ խումբը, որը, ինչպես նշվեց, ընտրվել է բացահայտելու համար դեռահասի սոցիալական հարմարման առանձնահատկությունները: Փորձարարական հետազոտության երկրորդ փուլից առաջ մշակվել և վերլուծվել են առաջին փուլով ստացված արդյունքները, առանձնացվել են դեռահասների այն խմբերը, որոնք աչքի էին ընկնում սեռադերային նույնականացման նորմատիվ (ստուգիչ խումբ) և դեստրուկտիվ (հիմնական խումբ) դրսևորումներով: Հարցվողների ձևավորված երկու խմբերում էլ կիրառվել են սոցիալական հարմարման բացահայտմանն ուղղված մեթոդներն ու մեթոդիկաները, որոնք ներկայացնում ենք ստորև:

Ա. Ղրիխոժանի մշակմամբ Դեմբո-Ռուբինշտեյնի «Ինքնագնահատականի ախտորոշման» մեթոդիկան ուղղված է դեռահասների կողմից անձնային այնպիսի հատկությունների, ինչպիսիք են առողջությունը, ընդունակությունները, բնավորությունը և այլնի գնահատմանը:



Նկար2. Տղա դեռահասների ինքնագնահատականի ախտորոշման միջինացված տվյալներ



Նկար 3. Աղջիկ դեռահասների ինքնագնահատականի ախտորոշման միջինացված տվյալներ

Կիրառվել է Կ. Ռոջերս - Ռ. Դայմոնդի «Սոցիալական-հոգեբանական հարմարման ախտորոշման» մեթոդիկան, որի նպատակն է բացահայտել անձի հարմարվողականության առանձնահատկությունը «հարմարման», «ինքնընդունման», «ուրիշներին ընդունման», «հուզական հարմարավետության», «ինտերնալության», «գերակայության ձգտման» ցուցանիշներով:

Ռ. Էնրայտի «Դեռահասի եսակենտրոնության-սոցիոկենտրոնության ախտորոշման» մեթոդիկայի տեսամեթոդական հիմքը կազմում է Ռ. Էնրայտի հայացքները դեռահասության տարիքում եսակենտրոնության դրսևորման վերաբերյալ: Ռ. Էնրայտի մեթոդիկան հետազոտության մեջ ներկայացված է Տ. Ռյաբովայի մշակմամբ: Մեթոդիկայի արդյունքներով պարզ դարձավ, որ եսակենտրոնության վառ արտահատվածությունը հանգեցնում է սոցիալական հարմարման դժվարություններին և ուղեկցվում է սեռադերային նույնականացման դեստրուկտիվ դրսևորումներով:

Դեռահասների սոցիալական միջավայրին հարմարման համատեքստում ուսումնասիրվել է նաև ծնողների հանդեպ դեռահասների վերաբերմունքը ըստ **Է. Շաֆերի մեթոդիկայի**:

Ոչ ստանդարտացված զրույցի մեթոդի կիրառումը նպատակ ուներ վեր հանելու ծնողների և ուսուցիչների հիմնական պատկերացումներն ու

մտահոգությունները դեռահասների սեռադերային նույնականացման դրսևորումների վերաբերյալ: Ստացված արդյունքները գրանցվել են, մշակվել և դուրս բերվել որոշակի օրինաչափություններ ծնողների պատկերացումներում:

Փորձարարական հետազոտության արդյունքում ձեռք բերված տվյալները ենթարկվել են որակական և համեմատական վերլուծության: Փորձարարական հետազոտության արդյունքներով կարող ենք եզրակացնել, որ դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորման առանձնահատկություններից են տղաների մոտ արտահայտված ֆեմինության, իսկ աղջիկների մոտ մասկուլինության, ինչպես նաև գենդերային չեզոքության հատկանիշները, որոնց խորացմանը նպաստող հանգամանքներից նշանակալի են դեռահասի եսակենտրոնության/սոցիոկենտրոնության աղավաղումները, ծնողավարման ոչ կոնստրուկտիվ եղանակները և սոցիալական միջավայրում ադապտացման անբավարար աստիճանը:

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել, որ ընտրված մեթոդների ընտրությունն ու կիրառումը պայմանավորված է ուսումնասիրության գիտական վարկածի ապացուցման նպատակով: Այդ հանգամանքով է պայմանավորված ընտրված մեթոդների մշակումն ու եզրակացությունների ձևակերպումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և փորձարարական վերլուծության արդյունքներով հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

- Դեռահասության տարիքային զարգացմանը զուգընթաց տղա դեռահասների մոտ թուլանում, իսկ աղջիկ դեռահասների մոտ ուժեղանում են անդրոգենության մասին պատկերացումները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում տղաների և աղջիկների հագուստի ունիֆիկացման աստիճանով և վերբալ մակարդակում նույնական արտահայտչամիջոցներով:
- Վաղ դեռահասության փուլում նկատվում է տղաների շրջանում գերազանցապես սեռադերային չտարբերակված հատկանիշների գերակայություն, ուշ դեռահասության փուլում տղաների մոտ դիտվում է մասկուլինության որոշակի միտվածություն: Աղջիկ դեռահասների մոտ պատկերը մի փոքր այլ է՝ վաղ դեռահասության փուլում գրանցվել են ֆեմինության արտահայտված ցուցանիշներ, իսկ մասկուլինությունը փոքր ինչ զիջում է տղաների ցուցանիշին: Ուշ դեռահասության փուլում աղջիկների սեռադերային նույնականացման դինամիկան կրում է զգալի փոփոխություններ և արտահայտվում անդրոգինության որոշակի պատկերով:
- Տղա դեռահասների մոտ դեռահասության տարիքի զարգացմանը զուգընթաց ուժեղանում է սեռադերային նույնականացման կարծրատիպայնացումը մասկուլինության հատկանիշներով: Աղջիկ դեռահասների մոտ նկատվում է անդրոգինության զարգացման միտում, երբ ուժեղանում են ոչ միայն մասկուլինության, այլև ֆեմինինության հատկանիշները, դրսևորվելով ինչպես իրական, այնպես իդեալական Ես-պատկերներում:

- Դեռահասների սոցիալական հարմարման համատեքստի վերլուծության արդյունքում վեր են հանվել ուսուցիչների կողմից տղա և աղջիկ դեռահասների հանդեպ վերաբերմունքի որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես, ուշ դեռահասության փուլում պատկերը արտահայտված կերպով նկատելի է ուսուցիչների կողմից դրական և հանդուրժողական վերաբերմունքը աղջիկների հանդեպ, ինչը թույլ է տալիս եզրակացնելու այդ տարիքում ուսուցիչների կողմից ֆեմինության հատկանիշներով դասապրոցեսի վարման միտման մասին: Այդ փաստը կարող է իր ազդեցությունն ունենալ ոչ միայն դեռահասների սեռադերային նույնականացման, այլև դեստրուկցիայի խորացման առումով տղա դեռահասների շրջանում:
- Սեռադերային նույնականացման դեստրուկտիվ հատկանիշների դրսևորմանը մեծապես նպաստում է ընտանիքի ինստիտուտը. հիմնական երկու ենթախմբերի դեռահասների փոխհարաբերությունները միտվածություն են ցույց տալիս պահպանելու հասակակիցների, հատկապես, սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հատկանիշներով հասակակիցների միջավայրում սերտ կապերը, իսկ ծնողների հետ փոխահարաբերություններում նկատվում է օտարացման միտում:
- Ի տարբերություն հիմնական երկու ենթախմբերի սեռադերային պսիխոգրամմայի, ստուգիչ երկու տարիքային խմբերում նկատելի են որոշակի փոփոխություններ՝ միջավայրի հետ փոխհարաբերություններում: Ստուգիչ I ենթախմբում առկա է գրեթե ամբողջությամբ ներդաշնակ պատկեր, երբ դեռահասների վստահության շրջանակում են թե՛ հասակակիցները, թե՛ ծնողներն ու ուսուցիչները: Պատկերը մասնակիորեն փոխվում է ուշ դեռահասության տարիքում, երբ հասակակիցների և ծնողների հետ հիմնականում պահպանվում են ներդաշնակ փոխհարաբերությունները, սակայն որոշակի առումով տուժում են ուսուցիչ-դեռահաս կապերը՝ դեռահասները ինչ-որ չափով դրսևորում են հաղորդակցման և փոխըմբռնման դժվարություններ ուսուցիչների հետ:
- Սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հատկանիշներով դեռահասների մոտ առավել, քան ստուգիչ երկու ենթախմբերում, վտանգված են, թե՛ հավակնությունների և թե՛ ինքնագնահատականի մակարդակները: Սեռադերային նույնականացման դեստրուկցիան հանգեցնում է անհամարժեք բարձր կամ ցածր հավակնությունների պարագայում դեռահասների ինքնագնահատականի մակարդակի նվազմանը:
- Սոցիալական հարմարման գրեթե բոլոր ցուցանիշները հիմնական երկու ենթախմբերում դրսևորվեց նորմայից ցածր միավորներով, թե՛ տղաների, թե՛ աղջիկների շրջանում:
- Սեռադերային դեստրուկտիվ հատկանիշներով նույնականացման դեռահասների հիմնական երկու ենթախմբերում առավել նշանակալի էին ծնողավարման թշնամական, դիրեկտիվ և անհետևողական եղանակները, որոնք կորցնում են իրենց արտահայտվածությունը ստուգիչ երկու ենթախմբերի դեռահասների գնահատականներում:

➢ Սեռադերային նույնականացման դեստրուկցիայի նշաններն արտահայտվում են հիմնականում սեփական սեռի մերժման, հակառակ սեռային պատկանելիության միտումներով: Սեփական սեռի հանդեպ բացասական զգացողությունները, ինչպես նաև սեփական սեռին համարժեք դերի մերժումն արտահայտվել է հետևյալ ցուցանիշներով՝ դեռահասների նկարներում բացակայում էին սեռային հատկանիշների հստակ ցուցիչները, առավելությունը հաճախ տրվում էր հակառակ սեռին հատուկ արտահայտչամիջոցներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում:

1. Խաչատրյան Լ., Ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները իրավախախտ դեռահասների մոտ, «Տեսական և կիրառական հոգեբանության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով, Երևան, 2011, էջ 363-365.
2. Գևորգյան Ս., Խաչատրյան Լ., Շեղվող վարքագիծ ունեցող դեռահասների մոտ սեռահասունացման և սեռային դերի ընկալման ու դրսևորման յուրահատկությունները, «Հասարակություն, ընտանիք, դեռահաս: Արդիական խնդիրները Հայաստանում և սփյուռքում» միջազգային գիտագործնական համաժողով, Երևան, 2012, էջ 83-87.
3. Խաչատրյան Լ., Ծնողավարման թրեյնինգների կազմակերպման արդյունավետությունը դեռահասների սոցիալ-հոգեբանական հարմարվողականության գործընթացում, «Տեսական և կիրառական հոգեբանության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով, Երևան, 2013, էջ 88-91.
4. Խաչատրյան Լ., Դեռահասների սեռադերային նույնականացման խանգարման դրսևորման առանձնահատկությունները, «Արդիականության մարտահրավերները, փիլիսոփայության և հոգեբանության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողով, Երևան, 2014, էջ 312-315.
5. Խաչատրյան Լ., Սեռադերայինն նույնականացման դեստրուկցիա ունեցող դեռահասների անձնային առանձնահատկությունները, «Միասին հանուն առողջության» Հայաստանի 4-րդ միջազգային բժշկական համագումար, Երևան, 2015, էջ 91-92.
6. Խաչատրյան Լ., Սեռադերային նույնականացման դեստրուկցիան և անձնայինն դրսևորումները դեռահասությանն փուլում, Տեսական և կլինիկական բժշկության հարցեր: Գիտագործնական հանդես, №5, /107/ 2016, էջ 9-13.
7. Խաչատրյան Լ., Հոգեբանական սեռի ցուցանիշները սեռադերային նույնականացման դեստրուկցիա ունեցող դեռահասների մոտ, Տեսական և կլինիկական բժշկության հարցեր: Գիտագործնական հանդես, /108/ №5, 2016, էջ 32-35.

8. Խաչատրյան Լ., Սեռահասունացման գործընթացները և սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորումները դեռահասության շրջափուլում, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Երևան, 2017, էջ 126-131.
9. Հակոբյան Ն., Խաչատրյան Լ., Ծնող-դեռահաս փոխհարաբերությունները սեռադերային նույնականացման դեստրուկցիաներ ունեցող դեռահասների մոտ, Կաճառ գիտական պարբերական, Երևան, 2017, էջ 217-222.
10. Khachatryan L., Components of Gender Identity in Adolescence, Katchar Scientific Periodical, 2023, №1, pp. 112-121.
11. Khachatryan L., On The Definition of Gender Identity Disorder in Adolescence, Katchar Scientific Periodical, 2023, №2, pp. 70-80.

ХАЧАТРЯН ЛИЛИТ АЙКОВНА
ОСОБЕННОСТИ ДЕСТРУКЦИИ ПОЛОРОЛЕВОЙ ИДЕНТИЧНОСТИ ПОДРОСТКОВ В КОНТЕКСТЕ ПСИХОЛОГИЧЕСКОЙ АДАПТАЦИИ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. "Социальная психология".

Защита состоится 12.12.2023г. в 12^{00} часов, на заседании специализированного совета по психологии 064 Комитет по высшему образованию и науке по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертационного исследования обусловлена тем, что проблема деструкции полоролевой идентичности подростков важна не только для психологической науки, но и для общества в целом. Среди актуальных вопросов исследования являются изучение, осмысление и оценка психологических особенностей деструкции полоролевой идентичности, что приобретает особенную важность в контексте психологической адаптации подростков в условиях глобализационных процессов, наблюдаемых в современном обществе.

Цель исследования:

Выявить сущность и особенности проявления, а также фазы развития деструкции полоролевой идентичности подростков, рассматривая данное явление в контексте психологической адаптации.

Основные задачи исследвания:

1. Представить теоретико-методологическое исследование сущности и особенностей проявления данного явления.
2. Выявить взаимосвязь деструкции полоролевой идентичности подростков и особенностей психологической адаптации.
3. Представить проявления стремлений и самооценки подростков, обусловленных деструкцией полоролевой идентичности.
4. Выявить возрастные фазы деструкции полоролевой идентичности подростков.
5. Выявить особенности эгоцентричности/социоцентричности личности подростка, обусловленные деструкцией полоролевой идентичности.
6. Выработать методические указания, направленные на предотвращение деструкции полоролевой идентичности.

Гипотеза исследования.

Особенностями проявления деструкции полоролевой идентичности в подростковом возрасте являются проявления не соответствующих полу ролевых стереотипов, склонности к идентификации с противоположным полом, искажения принятия Я-образа и неудовлетворительный уровень адаптации в социальной среде.

Научная новизна исследования.

Были выявлены, интерпретированы и доработаны критерии характеристики проявлений полоролевой деструкции идентичности подростков, фазы проявления деструкции полоролевой идентичности и обусловленные ими особенности социальной адаптации.

Теоретическая и практическая значимость исследования.

Данные, полученные в результате проведенного нами исследования, а также заключения и выявленные особенности и закономерности дополняют и расширяют научные представления о полоролевой идентичности подростков, а также о деструкции полоролевой идентичности, акцентируя важность формирования полового самосознания и полоролевых особенностей в процессе преодоления различных девиаций. Практическая значимость исследования состоит в том, что результаты проведенного исследования и выявленные психологические особенности могут быть использованы для совершенствования дальнейших исследований в области психологии и педагогики, разработанные методические указания применимы в целях формирования полового самосознания, процесса полоролевой идентичности подростков, а также в целях выявления и преодоления проявлений внутриличностной и межличностной дезадаптации личности.

Достоверность результатов.Достоверность результатов обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы и задач, а также использованными методами. Теоретические положения и выводы работы получены на основе многостороннего научного анализа экспериментальных данных.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования обсуждались на заседаниях кафедры развития и прикладной психологии АГПУ имени Х. Абовяна, на конференциях. Полученные результаты и использованные в исследовании методы были применены в практической работе с подростками, совершившими правонарушения в рамках психологических работ в Армянском центре здоровья и образования, в тренингах, проведенных в 4-х школах г.Еревана, в 2-х поликлиниках и медицинских центрах. Результаты исследования были обобщены в 11-ти научных публикациях.

Структура работы.

Диссертация состоит из теоретической и экспериментальной частей: введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Первые две главы работы содержат теоретический анализ возрастных особенностей подросткового периода. Вопросы полоролевой социализации и возможных искажений идентичности, а также анализ вопросов психологической адаптации представлен в контексте полоролевой идентичности подростка. Объем работы составляет 168 страниц, без приложений – 142 страниц.

По теме диссертации опубликовано 11 статей.

KHACHATRYAN LILIT HAJK

FEATURES OF GENDER-ROLE IDENTITY DESTRUCTION OF ADOLESCENTS IN THE COTEXT OF PSYCHOLOGICAL ADAPTATION

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03. "Social Psychology". The defence of this thesis will take place at 12.12.2023y. at 12^{00} oclock, at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the The Higher Education and Science Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

Address: Tigran Mets street 17, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

Actuality.

The relevance of the dissertation research is conditioned by the fact that the problem of destruction of the gender-role identity of adolescents is important not only for psychological science, but also for society as a whole. Among the current issues of the study are the investigation, understanding and assessment of the psychological features of the destruction of gender-role identity, which gains particular importance in the context of the psychological adaptation of adolescents in the conditions of globalization processes observed in modern society.

Objective of the research.

To identify the essence and features of the manifestation, as well as the phases of the development of destruction of the gender-role identity of adolescents, considering this phenomenon in the context of psychological adaptation.

Main tasks of the research are:

1. To present a theoretical and methodological study of the essence and features of the manifestation of this phenomenon.
2. To identify the relationship between the destruction of the gender-role identity of adolescents and the characteristics of psychological adaptation.
3. To present manifestations of aspirations and self -assessment of adolescents due to destruction of gender-role identity.
4. To identify age-related phases of destruction of the gender-role identity of adolescents.
5. To identify the features of egocentricity/sociocentricity of the personality of an adolescent, due to destruction of gender-role identity.
6. To develop methodological instructions aimed at preventing the destruction of gender-role identity.

Hypothesis of the research.

The features of the destruction of gender-role identity in adolescence are manifestations of the role stereotypes non-corresponding to gender, a tendency to identify with the opposite sex, distorting the adoption of the I-image and the unsatisfactory level of adaptation in the social environment.

Scientific novelty of the research.

There are revealed, interpreted and finalized the criteria for the characteristics of manifestations of gender-role destruction of the identity of adolescents, the phases of manifestation of the destruction of gender-role identity and the characteristics of social adaptation.

Theoretical and practical significance of the research.

The data obtained as a result of the study we conducted, as well as conclusions and identified features and patterns, complement and expand scientific ideas about the gender-role identity of adolescents, as well as the destruction of gender-role identity, focusing the importance of the formation of gender self-awareness and gender rolled features in the process of overcoming various deviations.

The practical significance of the study is that the results of the study and the identified psychological characteristics can be used to improve further research in the field of psychology and pedagogy, the developed methodological instructions are applicable in order to form gender self-awareness, the process of gender-role identity of adolescents, as well as in order to identify and overcome manifestations of intrapersonal and interpersonal desadaptation of personality.

Credibility of results.

Reliability of the results is conditioned by the methodological validity and compliance of the purpose, the hypothesis and the tasks as well as by the methods used. Theoretical provisions and conclusions of the work were obtained on the basis of the multilateral scientific analysis of experimental data.

Approbation and adoption of the research results.

The results of the study were discussed at the meetings of the Department of Development and Applied Psychology of ASPU named after Kh. Abovyan, at the conferences. The results and the methods used in the study were applied in practical work with adolescents who have committed offenses in the framework of psychological work at the Armenian Center for Health and Education, in trainings conducted in 4 schools of the city of Yerevan, in 2 clinics and medical centers. The results of the study were summarized in 11 scientific publications.

Structure of the thesis.

The thesis consists of the theoretical and experimental parts: introduction, three chapters, conclusions, a list of references and appendices. The first two chapters of the work contain theoretical analysis of the age-related characteristics of adolescence. The issues of gender-rolled socialization and possible distortions of identity, as well as an analysis of the issues of psychological adaptation are presented in the context of the gender-role identity of adolescents. There are presented 14 tables, 11 charts, as well as 154 references. The volume of work is 168 pages, without appendices 142 pages.

Eleven articles have been published on the subject of the thesis.